2021թ. երրորդ եռամսյակի ընթացքում

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

կողմից կատարված աշխատանքների

Հաշվետվություն

1. «Սևան» ազգային պարկի պահպանություն.

Պահպանության ծառայություններ, աշխատակիցների կողմից պարկի տարածքի արգելոցների և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով.

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի արագ արձագանքման բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է ամենօրյա հսկողություն՝ անտառային օրենսդրության խախտումների և այլ բնապահպանական խախտումների կանխարգելման, հայտնաբերման ուղղությամբ:

2021 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում արձանագրվել է 17 բնապահպանական խախտման դեպք, որից 6-ը՝ ապօրինի ծառահատման, 2-ը՝ ապօրինի ձկնորսության, 1 աղտոտման, 3 ավազի ապօրինի դուրս բերման և 3 ապօրինի շինարարության դեպք:: Առգրավվել է 50 ձկնորսական պոլիէթիլային ցանց: Արձանագրված ապօրինի ծառահատման 6 դեպքերի վերաբերյալ մանրամասները ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է.

N	Ամիս ամսաթիվ	Մասնաճյուղ	Տեղամաս	Պահաբաժին քառակուսի	Հատված ծառերի քանակը	Հատված ծառերի տեսակը	Հատված ծառերի տրամագիծը	Ծավալը
1	05.07.2021թ.	Վարդենիս	Վարդենիս	4-րդ պահաբաժին	3 հատ	Սոճենի	1-24 սմ 1-18 սմ 1-20 սմ	0,69
2	02.08.2021թ.	Արտանիշ	Դրախտիկ	1-ին պահաբաժնի, 4-րդ քառակուսի	5 հատ	Բարդի	1-30 սմ 1-30 սմ 1-30 սմ 1-44 սմ 1-32 սմ	3,433
3	26.08.2021 թ.	Նորատուս	Այրիվան	4-րդ պահաբաժին	5 հատ կոճղ իրենց 15 ճյուղավորու մներով	Բարդի	1-22 սմ 1-22 սմ 1-16 սմ 1-16 սմ 1-18 սմ 1--16 սմ 1-20 սմ 1-20 սմ 1-22 սմ 1-22 սմ 1-20սմ 1-16սմ 1-16սմ 1-22սմ 1-18սմ	2,374
4	26.08.2021 թ.	Նորատուս	Այրիվան	3-րդ պահ.	6 հատ	Սոճենի	3-20 սմ 2-24 սմ 1-18 սմ	1,467
5	26.08.2021 թ.	Նորատուս	Այրիվան	3-րդ պահ.	20 հատ	Սոճենի	7-12 սմ 4-14 սմ 3-16 սմ 2-10 սմ 2-8 սմ	1,184

6	27.09.2021 թ.	Նորատուս	Այրիվան	4-րդ քառ.	8 հատ	Սոճենի	1-28 սմ 1-18 սմ 1-34 սմ 1-22 սմ 1-16 սմ 1-24 սմ 1-22 սմ 1-26 սմ	2,537
							Ընդամենը	11,685

«Սևան» ազգային պարկի տարածքում երրորդ եռամսյակի ընթացքում արձանագրվել է 7 հրդեհի դեպք, որոնք ՊՈԱԿ-ի աշխատողների և ՀՀ ԱԻՆ հրշեջ փրկակարական ծառայության հետ համատեղ մարվել են:

Հայտնաբերված բոլոր իրավախախտումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և ուղարկվել են իրավասու մարմիններին՝ համապատասխան ընթացք տալու, իրավախախտողին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

«Սևան» ազգային պարկի տարածքում դեռևս չեն սկսվել աշնանային հերթական և վերահսկողական ստուգումները: ՊՈԱԿ-ի տնօրենի համապատասխան հրամանով կսկսվեն հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Ստուգումների արդյունքները կներկայցվեն շրջակա միջավայրի նախարարություն:

Սևանա լճի ափամերձ տարածքներում գտնվող, 1901.5 մետր նիշից ներքև ապօրինի կառուցված շենք-շինությունների ապամոնտաժման աշխատանքներ.

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցներով շենք-շինությունների ապամոնտաժման համար մեքենամեխանիզմներ ձեռք բերվելուց հետո ՊՈԱԿ-ը նախատեսել է ապամոնտաժել 25 տնտեսվարողների տարածքներում գտնվող 45 միավոր շենք-շինությունները:

- **«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղակատվության տրամադրում**

Սևանա լճին հարակից համայնքների բնակչության հետ քննարկվել է մարդու և բնության ներդաշնակ փոխազդեցության, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանն ուղղված արդի հիմնահարցերը:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնը իրականացրել է ուսուցողական-ճանաչողական մի շարք միջոցառումներ.

1. «Անտառային գազաններ»:
2. «Սնկերը արդյոք բույսեր են»:
3. «Սևանա լճի էկոլոգիան»

Կազմակերպվել են բացօթյա ցուցահանդեսներ «Մեկ օր արևոտ եղանակին» և «Սևանա լիճը կտավներում» խորագրերով:

Բնության հատուկ պահպանվող տարածքների օրը նշելու կապակցությամբ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնի կողմից իրականացվել է էկոկրթական, էկոզբոսաշրջային, հասարակության բնապահպանական ենթագիտակցության զարգացման և իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝

Սեպտեմբերի 14-ին ժամը 15:30-ին
«Սևանա լիճը և բնության արհավիրքները» էկոկրթական սեմինար, որին մասնակցել են Սևանի ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտները:

Սեպտեմբերի 22-25-ին քառօրյա ցուցահանդես
«Սևանի ֆաունան և ֆլորան», որի ընթացքում ցուցադրվել են Հ. Իգիթյանի անվան Գեղագիտության կենտրոնի Սևանի մասնաճյուղի սաների աշխատանքները:

Սեպտեմբերի 28-ին ժամը 15:30-ին
«Մաքրությունը սկսվում է մեր բակից» աղբահավաքության միջոցառում՝ մասնակցում են Սևանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի բռնցքամարտի խմբի սաները:

Երրորդ եռամսյակում Այցելուների կենտրոն է այցելել շուրջ 940 այցելու:

- **Ընդհանուր բաժին.**

2021 թվականի երրորդ եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ է մուտքագրվել 821 գրություն, որից 236-ը շրջակա միջավայրի նախարարությունից, 585-ը՝ այլ իրավաբանական և ֆիզիկական անձանցից: Ելքագրվել է 933 գրություն, որից 124-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Գործավարության կարգին համապատասխան ստացված գրություններն ու նամակները ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու համար:

2021 թվականի երրորդ եռամսյակում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 18 մարդ, ազատվել է 18 մարդ, արձակուրդներից օգտվել են 70 աշխատող:

Իրավաբանների կողմից 2021թ. 3-րդ եռամսյակի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝

- 12 հայցադիմումներ գումարի բռնագանձման պահանջով, 1 հայցադիմում գումարի բռնագանձման և պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծելու պահանջներով:
- Վճարման կարգադրություն արձակելու մասին 3 դիմում՝ գումարի բռնագանձման պահանջով,
- Դատարան է ներկայացվել 3 հայցադիմումի պատասխան.
- Դատարան է ներկայացվել 2 վճռաբեկ բողոք.
- 3 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու մասին:
- 3 դիմում-միջնորդագիր հայցադիմումից հրաժարվելու մասին:

- 3 դմիմում վճռի օրինական ուժի մեջ մտած լինելու փաստը երկրորդ կնիքով հատատելու մասին:

2. Վարձավճարները ուշացնելու համար 3 վարձակալների ներկայացվել են հողամասի վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրերը միակողմանի, վաղաժամկետ լուծելու առաջարկներ:

3. ՀՀ ոստիկանության համապատասխան բաժիններ են ներկայացվել ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից կազմված իրավախախտումների վերաբերյալ 3 արձանագրություններ՝ համապատասխան ընթացք տալու համար:

4. Պատասխանվել է թվով 40 գրությունների (դիմումների):

5. Հողի նկատմամբ վարձակալության /կառուցապատման իրավունք ունեցողներին 30.09.2021թ. դրությամբ պարտքի մասով ուղարկվել են թվով 350 ծանուցագիր:

- **Տնտեսական սպասարկման բաժին.**

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնտեսական սպասարկմա բաժնի կողմից 2021թ. երրորդ եռամսյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ստորաբաժանումներին է տրամադրվել դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ և գրենական պիտույքներ:
2. Իրականացվել է շենք-շինությունների և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:
3. Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քսայուղերի շարժի հաշվառում, կատարվել է չորս ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգում:
4. Կազմակերպվել և մյուս բաժինների հետ համատեղ մաքրվել և բարեկարգվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի վարչական շենքի հարակից տարածքները, հանրային լողափերում կատարվել է մաքրման և բարեկարգման աշխատանքներ, կատարվել է ծառատնկման աշխատանքներ:
5. Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:
6. Գույքագրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-իկողմից վարձակալության տրված հիմնական այն միջոցները,որոնք ջրածածկ են,կամ գտնվում են կիսաքանդ վիճակում, որի ցուցակները ներկայացվել են նախարարություն:
7. Արագ արձագանքման բաժնի աշխատակիցների հետ համատեղ կատարվել են հանրային լողափների բարեկարգման աշխատանքներ, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ամբողջ անձնակազմը ապահովվել է ամառային և ձմեռային համազգեստներով:
8. Կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել են համապատասխան բաժին՝ գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

- 2021 թվականի երրորդ եռամսյակի համար, համաձայն շրջակա միջավայրի նախարարության և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված N ՇՄՆ-ԴՇ-21/03 պայմանագրի, պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների համար 2021թ. համար որպես դրամաշնորհ ՊՈԱԿ-ին տրամադրվել է 221,728,400.00 հազար դրամ, որը փաստացի ծախսվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձի վարձատրության համար:

2. Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.

-Գիտական հետազոտությունների, մշտադիտարկման և կադաստրի վարման բաժնի աշխատակիցների կողմից գիտական հետազոտությունների իրականացում.

2021թ. երրորդ եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Արգիճի և Ծակքար գետերի տարբեր հատվածների ջրերում 20^0C-ում և 37^0C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների քանակը 1լ. ջրում), ինչպես նաև լուծված թթվածնի և օրգանական նյութի (պերմանգանատային օքսիդացում) պարունակությունը:

Մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով՝ կատարվել է գետերի ջրերի որակի էկոլոգասանիտարական գնահատում:

Մանրէաբանական հետազոտություններ են իրականացվել նաև Փոքր Սևանի հիմնական լողափերի ջրերի սանիտարական վիճակի գնահատման համար:

Գետ Արգիճի

Ակունք- կատարված մանրէաբանական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի ակունքի ջրերում 20^0C-ում և 37^0C-ում աճող սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 650 ԳԱՄ/մլ և 170 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,5 հազ. ԳԱՄ/լ: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 8.3 մգ O_2/դմ^3: Ինչպես նախորդ տարիներին, ակունքում, գետի մյուս դիտակետերի համեմատ, գրանցվել է պերմանգանատային օքսիդացման բարձր արժեք՝ 3 մգO/դմ^3, ինչը հավանաբար պայմանավորված է ջրում կախված մասնիկների առատությամբ, ինչպես նաև տարածքում անասնագոմերի առկայությամբ, որոնց հոսքաջրերը լցվելով գետ՝ հարստացնում են այն օրգանական նյութով (աղ.1):

Աղյուսակ 1

Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Արգիճի գետի տարբեր հատվածների ջրերում
17.08.2021թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հազ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգանատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Ակունք	650	170	0.5	8.3	3
Ներքին Գետաշենից ներքև՝ ավտոմայրուղում կամրջի	3150	580	50	10.5	1.9

հարևանությամբ					
Գետաբերան	2800	232	4	11.5	1.9

Ներքին Գետաշենից ներքև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ- ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գետը հոսելով Մադինա, Վերին Գետաշեն և Ներքին Գետաշեն համայնքների միջով, աղտոտվում է ֆեկալ-տնտեսական հոսքաջրերով, որի հետևանքով վերցված փորձանմուշում, ակունքի համեմատ, արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ:

Այսպես, 20^0C-ում և 37^0C-ում աճող սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 3150 ԳԱՄ/մլ և 580 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 50 հազ. ԳԱՄ/լ: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 10.5 մգ O_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1.9 մգO/դմ^3:

Գետաբերան- կատարված հետազոտությունների արդյունքում, պայմանավորված գետի ջրերի ինքնամաքրմամբ, նախորդ դիտակետի համեմատ արձանագրվել է հետազոտված մանրէների, հատկապես աղիքային ցուպիկների թվաքանակի նվազում: Այսպես, 20^0C-ում և 37^0C-ում աճող սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 2800 ԳԱՄ/մլ և 232 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 4 հազ.ԳԱՄ/լ: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 11.5 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1.9 մգO/դմ^3:

Գետ Ծակքար

Ակունք- Ծակքար համայնքի սկզբնամասում բխող հզոր աղբյուրի հաշվին ձևավորվում է գետի հոսքը, ուր թափվում են նաև մոտակա տների ֆեկալ-տնտեսական հոսքաջրերը՝ ենթարկելով այն աղտոտման:

Կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի ակունքի ջրերում 20^0C-ում և 37^0C-ում աճող սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 2700 ԳԱՄ/մլ և 280 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 5 հազ.ԳԱՄ/լ: Լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 10.2 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 0,64 մգO/դմ^3 (աղ.2):

Աղյուսակ 2

Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Ծակքար գետի տարբեր հատվածների ջրերում
17.08.2021 թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ	Կոլի-ինդեքս, հազ.	Լուծված թթվածին,	Պերմանգանատային օքսիդացու

	20°C	37°C	ԳԱՄ/լ	մգO_2/դմ^3,	մ, մգO/դմ^3
Ակունք	2700	280	5	10.2	0.64
Գետաբերան	3200	590	12	9.5	1.36

Գետաբերան- գետը, հոսելով Ծակքար համայնքի միջով, շարունակվում է աղտոտվել ֆեկալ-տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով, ինչի արդյունքում ակունքի համեմատ գրանցվել է մանրէների քանակական աճ և օրգանական նյութի պարունակության ավելացում:

Այսպես, 20^{0}C-ում և 37^{0}C-ում աճող սապրոֆիտ մարէների քանակը համապատասխանաբար կազմել է 3200 ԳԱՄ/մլ և 590 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 12 հազ.ԳԱՄ/լ: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 9.5 մգ O_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 1.36 մգ O/դմ^3:

Այսպիսով, ելնելով մանրէաբանական ցուցանիշների (20^{0}C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակ, կոլի-ինդեքս) ստացված արդյունքներից՝ հետազոտված գետերի տարբեր հատվածների ջրերը, համաձայն Ռոմանենկոյի (Романенко и др., 1990) մակերևութային ջրի որակի էկոլոգասանիտարական գնահատման, դասվում են.

Գետ Արգիճի

Ակունք՝ շատ մաքուրից միանգամայն մաքուր կարգի

Ներքին Գետաշենից ներքև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ՝ թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի,

Գետաբերան՝ բավական մաքուր կարգի:

Գետ Ծակքար

Ակունք՝ բավական մաքուր կարգի

Գետաբերան՝ թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի

Համաձայն Ամբրազենի (Амбразене Ж.П., 1974) դասակարգման՝ ըստ 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակի, հետազոտված գետերի տարբեր հատվածների ջրերը դասվում են.

Գետ Արգիճի

- Ակունք՝ մաքուր դասին,
- Ներքին Գետաշենից ներքև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ՝ թույլ աղտոտված դասին,
- Գետաբերան՝ մաքուր դասին:

Գետ Ծակքար

- Ակունք՝ մաքուր դասին,
- Գետաբերան՝ թույլ աղտոտված դասին:

Փոքր Սևանի ռեկրեացիոն գոտիների ջրերում իրականացված մանրէաբանական հետազոտությունների արդյունքները

Փոքր Սևանի ռեկրացիոն գոտիների (լողափեր) ջրերի սանիտարական վիճակի գնահատման համար ուսումնասիրվել է աղիքային ցուպիկների խմբի մանրէների (ընդհանուր կոլիֆորմ) քանակը:

Հանգստի առավել ակտիվ շրջանում, հուլիսի առաջին տասնօրյակում, իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ուսումնասիրված լողափերի (Արևիկ, հանրային N1, N2, N3) ջրերում աղիքային ցուպիկների ինդեքսը փոխվել է 200-800 ԳԱՄ/լ սահմաններում: Ինչպես նախորդ տարում, առավել բարձր արժեք արձանագրվել է հանրային N1 և N2 լողափում, ինչը պայմանավորված է վերջինիս առավել ծանրաբեռնվածությամբ (աղ.1):

Աղյուսակ 1

Կոլի-ինդեքսը Փոքր Սևանի հիմնական

լողափերի ջրերում

լողափ	կոլի-ինդեքս, ԳԱՄ/լ
հանրային N 1	800
հանրային N 2	400
հանրային N 3	200
Արևիկ	260

Նշենք, որ ըստ ռեկրեացիոն ջրօգտագործման մանրէաբանական նորմերի հիգիենիկ պահանջի (Сан Пин 2. 1. 5. 980-00)՝ ընդհանուր կոլիֆորմ մանրէների քանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/100 մլ:

Այսպիսով, համաձայն հետազոտություններից ստացված արդյունքների՝ ուսումնասիրված լողափերի ջրերում շեղումներ չեն արձանագրվել:

Ձկան և խեցգետնի պոպուլյացիաների ուսումնասիրություն մեծ Սևանում և փոքր Սևանում.

2021թ. երրորդ եռամսյակում Սևանա լճում սիգի արդյունագործական որսի ժամանակ ձկնաբանական ուսումնասիրություններ են իրականացվել Սևանա լճի հյուսիսային և հյուսիսարևմտյան ջրային տարածքներում, որոնք հանդիսանում են սիգ ձկնատեսակի ինտենսիվ արդյունահանման վայր: Հետազոտությունների ընթացքում հավաքված փորձանյութերի մշակումը ցույց է տվել, որ լճում սիգի վտառի գլխաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ունի կայունացման միտում:

Ուսումնասիրվել են դնովի ցանցերով որսված սիգի չափատարիքային, սննդառության առանձնահատկությունները, սեռը և սեռական արգասիքների հասունացման փուլը և բտվածությունը:

Փոքր Սևանի տարածքում ձկների հիմնական կուտակումներ հանդիպել են ավելի մեծ խորություններում, քան մեծ Սևանի տարածքում, ինչը կարող է պայմանավորված լինել լճի երկու հատվածների միջև խորքային շերտերի ջերմաստիճանային պայմանների տարբերություններով: Ջրային այդ հատվածներից հանված դնովի ցանցերի մեջ եղած ձկների միջին երկարությունը օգոստոս ամսին կազմել է 30.3 սմ, քաշը՝ 380,0 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=1.38, K=1.28 (Լիճք, մեծ Սևան): Ուսումնասիրվող ժամանակահատվածում հետազոտված առանձնյակները պատկանել են 1^+, 2^+ և 3^+ տարիքային խմբերի, որոնք գտնվել են սեռահասունության երրորդ փուլում: Սեպտեմբեր ամսին փոքր Սևանում Նորատուսի ջրային տարածքից 40×40 մմ և ավել խորշեր ունեցող դնովի ցանցերով որսված սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է՝ 30.8 սմ, քաշը՝ 382.7 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=1.32, K=1.22 (Նորատուս, փ. Սևան): Հետազոտված առանձնյակները պատկանել են 1^+, 2^+ և 3^+ տարիքային խմբերի:

Ի տարբերություն նախորդ տարվա՝ 2020 թ. ուսումնասիրված նույն ժամանակահատվածում ձկների խոշոր կուտակումներ հանդիպել են ինչպես փոքր Սևանի, այնպես էլ մեծ Սևանի տարածքում: Ընդ որում վտառի առավել մեծ խտություն է դիտվել լճի համեմատաբար խորը հատվածներում (մեծ և փոքր Սևանի կենտրոնական գոտիներ) և մեծ Սևանի հարավարևելյան հատվածում: Մեծացել է կուտակման գոտիների հանդիպման հաճախականությունը, որը նույնպես վկայում է լճում ձկան ընդհանուր պաշարների որոշակի աճի առկայության մասին:

Հուլիս-սեպտեմբեր ամիսներին ուսումնասիրվել են դնովի ցանցերով որսված սիգի սննդառության առանձնահատկությունները: Սիգի համար հիմնական կեր են հանդիսացել զոոպլանկտոնային օրգանիզմները (դաֆնիաներ, թիոտանի խեցգետնակերպեր, կողալողեր, խիրոնոմիդի հարսնյակներ և թրթուրներ): Աղիների հագեցվածության աստիճանը վկայում է լճում սիգի կերային բազայի առատության մասին:

Ուսումնասիրությունների ժամանակ ջրի մակերեսային շերտի ջերմաստիճանը օրվա տարբեր ժամերին լճի տարբեր խորության գոտիներում տատանվել է 16.0° C-20.0° C սահմաններում:

2021թ. երրորդ եռամսյակում Սևանա լճում ուսումնասիրություն է կատարվել կարասի կենսաբանական վիճակը: Մեծ Սևանում կարասի բաշխվածության ամառային ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Լիճքի արգելոցում այդ ձկնատեսակը հանդիպել է 6-8 մետր խորությունների վրա, երբ ջրի ջերմաստիճանը տատանվում էր 20-21°C սահմաններում: Ուսումնասիրվող տարածքից որսված կարաս տեսակի ձկան միջին քաշը՝ 135.8 գրամ է, միջին երկարությունը՝ 15.2 սմ: Բտվածության ցուցանիշը՝ F=4.18, K=3.45: Հետազոտված 67 առանձնյակները պատկանել են 2^+,3^+ և 4^+

տարիքային խմբերի: Փորձանմուշները որսվել են դնովի ցանցերով, որոնց խորշերի մեծությունը տատանվել է 42×42 մմ և 45×45 մմ սահմաններում:

Փոքր Սևանում օգոստոս-սեպտեմբեր ժամանակահատվածում կարասի որսը իրականացվել է 5-6 մետր խորությունների վրա, երբ ջրի ջերմաստիճանը տատանվում էր 19-21°C սահմաններում:

Ուսումնասիրված տարածքում կարասը սնվել է դետրիտով, որը կազմված է դիատոմային կանաչ թելանման ջրիմուռներից:

Կարասի կշռային և գծային աճի տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ 2018թ. նույն ժամանակաշրջանի հետ համեմատ կարասի միջին գծային չափերը փոքրացել են: Փոքրացել են նաև կշիռը և առավելագույն չափերը: Այս փաստը խոսում է ձկների արդյունագործական ճնշման մասին, այնպես էլ աղիքային մակաբույծներով ձկան վարակվածության աստիճանի մեծացման, որը բերել է բազմաթիվ առանձնյակների մահացության: Այդպիսի բարձր վարակվածությունը բացատրվում է կարասի տեսակային և սննդառության առանձնահատկություններով, ինչպես նաև վերջինիս կենսապայմաններով:

2021թ. երրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ:

Կատարվել են խեցգետնի վերարտադրման, չափատարիքային, սեռական կառուցվածքի, բազմացման ժամանակահատվածի հետազոտություններ:

Խեցգետնաբանական հետազոտություններ են իրականվել փոքր Սևանի Ծովազարդ, Շորժա, Դրախտիկ և մեծ Սևանի՝ Ծովինար, Կարճաղբյուր, Արծվանիստ տեղամասերում:

Ուսումնասիրվել է խեցգետնի 1040 առանձնյակ, որից արու՝468 հատ, էգ՝ 572 հատ: Վերարտադրման ցուցանիշների գնահատման համար հետազոտվել է 190 էգ խեցգետին: Լճում խեցգետնի բազմացման ժամանակահատվածը սկսվել է փետրվարի երկրորդ տասնօրյակից: Բեղմնավորված ձվերից առաջնային թրթուրների ծնունդը գրանցվել է հունիսի վերջին և ավարտվել է հուլիսի առաջին տասնօրյակին:

Բեղմնավորմանը մասնակցած էգ առանձնյակների նվազագույն երկարությունը եղել է 8,2 սմ, առավելագույնը՝ 13.1 սմ: Բեղմնավորված ձվի միջին կշիռը կազմել է 11,5 մգ, նոր ծնված թրթուրների միջին կշիռը՝ 14,2 մգ: Էգերի և արուների հարաբերակցությունը տատանվել է 1:1 սահմաններում, աճի տեմպերը գրեթե միանման են:

Փորձանմուշների հետազոտությունները ցույց են տվել, որ արդյունագործական տարիքի առանձնյակները, որոնց չափերը գերազանցում են 9,0 սմ-ին, մաշկափոխանակությունն իրականացրել են հուլիս-օգոստոս ամիսներին:

Սևանա լճում ուսումնասիրվող վերը նշված ջրային տարածքներում խեցգետնի թակարդներով (զսպանակաձև, չինական հորմոնաձև) իրականացված որսի արդյունքում բացահայտվել է, որ խեցգետնի արդյունագործական պոպուլյացիայի մոդալ

տարիքային խմբերը ուսումնասիրվող տեղամասերում կազմել են 2-3 տարեկան կենդանիները:

Սևանա լճում խեցգետնի ձևաբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արու խեցգետինների միջին չափը փոքր Սևանում 8.7 սմ, քաշը՝ 18.0 գրամ, մեծ Սևանում՝ 9.1 սմ, քաշը՝ 21.4 գրամ: Էգերի համար համապատասխանաբար ցուցանիշները փոքր Սևանում 9.2 սմ, քաշը՝ 19.5 գրամ, մեծ Սևանում՝9.6 սմ, քաշը՝ 23.3 գրամ:

Խեցգետնի թակարդներով ձեռք բերված փորձանմուշներում մաշկափոխանակություն իրականացրած առանձնյակների թվաքանակը աննշան է 2-3%, վերջինս վկայում է այն մասին, որ մաշկափոխանակության շրջանում կենդանիները պակաս շարժուն են և վատ են սնվում:

Որսամիջոցների որսունակության հետազոտությունները ցույց են տվել, որ որսամիջոցների միջև եղած հեռավորության մեծացմանը զուգընթաց որսունակության ցուցանիշը մեծանում է:

Նախորդ տարիների բեղունության ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ առկա է վերարտադրման ցուցանիշների նվազման միտում: Վերջինս կարող է անթրոպոգեն ծանրաբեռնվածության արդյունքում պոպուլյացիայի երիտասարդացման հետևանք լինել:

-Էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրում, հաշվառում և մոնիթորինգ.

Կառավարության 2021թ. սեպտեմբերի 2-ի N1427-Ն որոշմամբ 2021 թվականի համար սիգի արդյունագործական նպատակներով չափաքանակը ավելացվել է ևս 50 տոննայով և որսի իրականացման ժամկետը երկարաձգվել է մինչև ս.թ. հոկտեմբերի 15-ը, որի համար ավելացված չափաքանակի մասով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում և 5 մասնաճյուղերում ընդունվել են 341 հայտեր: Ներկայումս ընթանում է պայմանգրերի կնքման գործընթացը:

Շարունակվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և հողօգտագործողների միջև կնքված պայմանագրերի արխիվային փաստաթղթերի տվյալների թարմացման և թվայնացման աշխատանքները: Թվայնացվել են 72 հողօգտագործողների պայմանագրերի փաթեթներ և վերակնքվել է 1 պայմանագիր: Կատարված փոփոխությունների վերաբերյալ ուղղումներ են կատարվել տվյալների բազայում: Կատարվել է հողամասերի 6 իրավատերերի տվյալների փոփոխություն, 6 հողամասի օտարում, 1 պայմանագիր լուծվել է, կազմվել է 3 համաձայնագիր հողամասի վարձավճարի բարձրացման վերաբերյալ, կնքվել է 11 նոր պայմանգիր, որից 2-ը արդեն ստացել են իրավունքի պետական գրանցում, իսկ 9-ը դեռևս գրանցման փուլում են::

Ամփոփվել են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ հողօգտագործողների կողմից ներկայացրած տարբեր խնդրանքներով դիմումները (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը

ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն)՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում քննարկելու և ընթացք տալու համար:

Կազմվել են «Սևան» ազգային պարկի հողամասերը վարձակալությամբ և/կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու 18 մրցույթային փաթեթներ և ներկայացվել են շրջակա միջավայրի նախարարություն:

3. Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.

❖ **Մասնաճյուղերի կողմից անհրաժեշտությամբ պայմանավորված անտառգիտական և անտառտնտեսական միջոցառումներ, սանիտարական հատումներ և խնամքի աշխատանքներ.**

Շրջակա միջավայրի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Խաչատրյանի 2021թ. օգոստոսի 26-ի № 485-Ա, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Պ. Ցուգունյանի 2021թ. օգոստոսի 27-ի № 121-Ա, ինչպես նաև «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լ. Ազիզյանի 2021թ. օգոստոսի 27-ի № 893-Ա հրամաններով կազմված աշխատանքային խմբի կողմից առաջարկված հաշվեգնահատման մեթոդի համաձայն տեղամասերում ուսումնասիրվել են սանիտարական հատման ենթակա ծառերը, որի հիման վրա լրամշակվել են հաշվեգնահատման ցուցակները, կազմվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի անտառներում 2021թ. իրականացվելիք բնափայտի մթերման ծավալները հաստատելու մասին» հրամանի նախագիծը և ներկայացվել են շրջակա միջավայրի նախարարություն՝ համապատասխան ընթացք տալու համար: Շրջակա միջավայրի նախարարությունը 2021թ. հոկտեմբերի 01-ի ՈՆ/16.10/6768 գրությամբ թույլատրել է ՊՈԱԿ-ի Սևանի, Արտանիշի, Վարդենիսի, Մարտունու և Նորատուսի մասնաճյուղերում իրականացնել սանիտարական հատումներ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Արտանիշ մասնաճյուղի Արտանիշի տեղամասում գտնվող միջպետական նշանակության Մ-14 ավտոճանապարհի Վարդենիս-Շորժա հատվածում հիմնանորոգման աշխատանքներին խոչընդոտող ծառերի հատման/էտման աշխատանքների արդյունքում հատատեղում կուտակված անտառայութը 2021թ. սեպտեմբերի 23-ին մուտքագրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստ՝ 0,798 մ^3 պահեստային վառելափայտ և 0,1 մ^3 պահեստային ջախ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևանի մասնաճյուղի Ախթամար տեղամասի 15, 16 և 17-րդ քառակուսիներով անցնող հանգստյան տան սեփականություն հանդիսացող 6Կվ օդային գծերի անխափան աշխատանքին խոչընդոտող ծառերի էտման և հատման աշխատանքների արդյունքում հատատեղում կուտակված անտառայութը 2021թ. սեպտեմբերի 15-ին մուտքագրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստ՝ 0,105 մ^3 պահեստային վառելափայտ և 1,86 մ^3 պահեստային ջախ և իրացվել է:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի 6-րդ պահաբաժնի 53-րդ քառակուսու անտառածածկ տարածքով անցնող վերգետնյա գազատարի մոտ

աճող և գազատարի սպասարկմանը խոչընդոտող կոճղաշիվային ծառերի էտման/ աշխատանքների արդյունքում հատատեղում կուտակված անտառայութը 2021թ. սեպտեմբերի 29-ին մուտքագրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստ՝ 0,007 մ^3 պահեստային վառելափայտ և 0,98 մ^3 պահեստային ջախ:

Առդիր՝ 1 խտանիշք:

«Սևան» ազգային պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Ա. Աբելյան

Ձև 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի 3-րդ եռամսյակում իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)

<<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ

(հազար դրամ)

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների NN	Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի			Պարզաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ
		Հաստատված նախահաշվի ցուցանիշները	Փաստացի կատարողականը	Գերածախս կամ թերիրացում (փակագծերում գերածախս, դրական նշանով թերիրացում)	
1	2	3	4	5=3-4	6
Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ				**0.0**	
Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3)		**329120.5**	**221728.4**	**107392.1**	
այդ թվում՝					
1. Դրամաշնորհներ ընդամենը,		**329120.5**	**221728.4**	**107392.1**	
որից՝					
1.1. Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ				0.0	
1.2.Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից		329120.5	221728.4	107392.1	Ֆինանսական միջոցների հատկացումը կատարվում է պայմանագրով սահմանված ժամանակացույցի համաձայն
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ				**0.0**	
3. Այլ եկամուտներ,		**0.0**	**0.0**	**0.0**	
որից՝					
3.1. Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից				0.0	
3.2. Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից				0.0	
3.3.Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը,		**0.0**	**0.0**	**0.0**	
այդ թվում՝					
- ծառայությունների մատուցումից				0.0	
- ապրանքների մատակարարումից կամ իրացումից				0.0	
- այլ եկամուտներ				0.0	

Գ. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող1+տող2)	x	329120.5	221728.4	107392.1	
Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3)՝ այդ թվում՝	x	329120.5	221728.4	107392.1	
Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	x	329120.5	221728.4	107392.1	
Դ1.1 Աշխատանքի վարձատրություն	x	329120.5	221728.4	107392.1	
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	329120.5	221728.4	107392.1	
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	0.0		0.0	
Դ2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	x	**0.0**	**0.0**	**0.0**	
Դ2.1. Շարունակական ծախսեր		**0.0**	**0.0**	**0.0**	
-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211	0.0		0.0	
-էներգետիկ ծառայություններ	4212	0.0		0.0	
-Կոմունալ ծառայություններ	4213	0.0		0.0	
-Կապի ծառայություններ	4214	0.0		0.0	
-Ապահովագրական ծախսեր	4215	0.0		0.0	
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	0.0		0.0	
-Այլ ծախսեր	4217	0.0		0.0	
Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	x	**0.0**	**0.0**	**0.0**	
-Ներքին գործուղումներ	4221	0.0		0.0	
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	0.0		0.0	
-Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր	4229	0.0		0.0	
Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	x	**0.0**	**0.0**	**0.0**	
-Վարչական ծառայություններ	4231	0.0		0.0	
-Համակարգչային ծառայություններ	4232	0.0		0.0	
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	0.0		0.0	
-Տեղակատվական ծառայություններ	4234	0.0		0.0	
-Կառավարչական ծառայություններ	4235	0.0		0.0	
- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236	0.0		0.0	
-Ներկայացուցչական ծախսեր	4237	0.0		0.0	
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	0.0		0.0	
Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	x	**0.0**	**0.0**	**0.0**	
-Մասնագիտական ծառայություններ	4241				
Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	x	**0.0**	**0.0**	**0.0**	
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	0.0		0.0	
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	0.0		0.0	
Դ2.6. Նյութեր	x	**0.0**	**0.0**	**0.0**	

-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	0.0		0.0	
-Գյուղատնտեսական ապրանքներ	4262	0.0		0.0	
-Վերապատրաստման և ուսուցման նյութեր	4263	0.0		0.0	
-Տրանսպորտային նյութեր	4264	0.0		0.0	
-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265	0.0		0.0	
-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	0.0		0.0	
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	0.0		0.0	
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	0.0		0.0	
Դ3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարարական) կազմակերպություններին	**x**	**0.0**		**0.0**	
Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
Դ3.2.1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջե		0.0	0.0	0.0	
այդ թվում					
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	**4822**	***0.0***	***0.0***	***0.0***	
ԱԱՀ	x	0.0		0.0	
Շահութահարկ	x	0.0		0.0	
Բնօգտագործման վճար	x	0.0		0.0	
Այլ հարկեր (նշել տեսակը)	x	0.0		0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	**4823**	***0.0***	***0.0***	***0.0***	
Ավտոմեքենաների տեխզննում		0.0		0.0	
Պետ. Տուրք		0.0		0.0	
նշել ըստ տեսակների		0.0		0.0	
Դ3.2.2.Համայնքների բյուջեներ		0.0	0.0	0.0	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	**4822**	***0.0***	***0.0***	***0.0***	
Գույքահարկ	x	0.0		0.0	
Հողի հարկ	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	**4823**	***0.0***	***0.0***	***0.0***	
Վարձակալական պայմանագրերից մասհանում 30%	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
-Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	**4831**	0.0		0.0	
Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**4861**	**0.0**	**0.0**	**0.0**	
Գիտական ուսումնասիրություններ	x			0.0	
Անտառվերականգման աշխատանքներ	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	
նշել ըստ տեսակների	x	0.0		0.0	

Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող9 -տող7)		0.0	0.0	0.0	
Զ. ԶՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)		0.0	0.0	0.0	
Զ1.Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝	x	0.0	0.0	0.0	
Զ1.1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	0.0	0.0	0.0	
-Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111	0.0		0.0	
-Շենքերի և շինությունների կառուցում	5112	0.0		0.0	
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	0.0		0.0	
-Տրանսպորտային սարքավորումներ	5121	0.0		0.0	
-Վարչական սարքավորումներ	5122	0.0		0.0	
-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	0.0		0.0	
-Աճեցվող ակտիվներ	5131	0.0		0.0	
-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	0.0		0.0	
-Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	5133	0.0		0.0	
-Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134	0.0		0.0	
Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	x	0.0	0.0	0.0	
-Հող	5411	0.0		0.0	
-Ընդերքային ակտիվներ	5421	0.0		0.0	
-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431	0.0		0.0	
-Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ	5441	0.0		0.0	
Զ2.Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր	x	0.0		0.0	
Է. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)	x	0.0	0.0	0.0	

Տնօրենի ժ/պ _____ Ա. Սարգսյան

«Ստաֆ Պլյուս» Խորհրդատվական ՍՊԸ _____ Ն. Նազարեթյան